

4. Կենդանաբանական այգու գործունեություն


ՀՀ-ում գործող միակ պետական կենդանաբանական այգում 2003թ. տարեվերջի դրությամբ առկա է եղել 205 տեսակի կենդանի և թռչուն (0.5%-ով ավել, քան 2002թ. տարեվերջին): Կենդանիների և թռչունների գլխաքանակը կազմել է 2316 (2002թ՝ 2272):

Կենդանիների քանակը, 1999-2003թթ. տարեվերջին

(միավոր)

	Տեսակների քանակը					Գլխաքանակը				
	1999	2000	2001	2002	2003	1999	2000	2001	2002	2003
Եղիկենցաղ*	1	1	2	35	3	1	1	2	54	5
Սողուններ	18	18	19	2	34	141	148	152	2	53
Կարնասուններ	41	54	56	51	52	502	154	170	135	145
Դրանցից՝ գիշատիչներ	24	28	29	25	25	67	60	65	49	55
Սմբակավորներ	17	26	27	26	27	98	94	105	86	90
Զկներ	7	17	17	23	24	156	201	228	236	248
Թռչուններ	71	68	70	68	64	489	508	620	608	614
Դրանցից՝ գիշատիչներ	13	13	15	15	15	60	62	68	72	66
Այլ	35	35	35	25	28	1048	1914	1872	1237	1251
Ընդամենը	173	193	199	204	205	2337	2926	3044	2272	2316

* Ըստ կենդանաբանական այգու տեղեկատվության, եղիկենցաղների տեսակամու և գլխաքանակի նվազելը պայմանավորված է դրանց բնական միջավայրը բաց թողնմամբ:



Կենդանաբանական այգու կենդանիների քանակական շարժը, 2003թ.

(միավոր)

	Վերաբռնակեցված				Վաճառված		Ծնված		Կենդանիների անկում	
	գնված		այլ ճանապարհով ձեռք բերված		Վաճառված		Ծնված		Կենդանիների անկում	
	տեսակ- ների քանակը	գլխա- քանակը	տեսակ- ների քանակը	գլխա- քանակը	տեսակ- ների քանակը	գլխա- քանակը	տեսակ- ների քանակը	գլխա- քանակը	տեսակ- ների քանակը	գլխա- քանակը
Սողուններ	-	-	-	-	-	-	3	6	6	7
Կարնասուններ	6	12	-	-	6	13	10	23	6	6
Դրանցից՝ գիշատիչներ	6	12	-	-	1	2	3	4	3	3
Սմբակավորներ	-	-	-	-	5	11	7	19	3	3
Թռչուններ	-	-	16	129	9	77	14	188	7	13
Այլ	-	-	-	-	2	63	5	470	-	-
Ընդամենը	6	12	16	129	17	153	32	687	19	26

Ծրակա միջավայրը և բնական պաշարները 77-ում 2003թ.

Կենդանաբանական այգում բնակվող 33 տեսակի 107 կենդանի և թռչուն գրանցված են միջազգային «Կարմիր գրքում», իսկ 49 տեսակի 130 կենդանի ու թռչուն՝ Հայաստանի «Կարմիր գրքում»: Միջազգային «Կարմիր գրքում» ընդգրկված՝ կենդանաբանական այգում բնակվող կենդանիների տեսակների քանակի գերակշռող մասը բաժին է ընկել կաթնասուններին՝ 58.8%, իսկ Հայաստանի «Կարմիր գրքում»՝ սողուններին՝ 46.9%:

Կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսը կազմել է 8.5 հա, իսկ կենդանիների համար նախատեսված կառույցների մակերեսը՝ 5.2 հա, որն ընդհանուր մակերեսի 61.2%-ն է: Կենդանիների համար նախատեսված ձմեռային կառույցների մակերեսը կազմել է 2.0 հա, որը կենդանիների համար նախատեսված կառույցների ընդհանուր մակերեսի 38.5%-ն է և կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսի 23.5%-ը:

Մեկ կենդանուն բաժին է ընկել 22.4 քառ. մ կառույց՝ 2002թ. 22.9 քառ. մ-ի դիմաց: Կենդանաբանական այգու ընդհանուր տարածքի մեկ հա-ին բաժին է ընկել 272 կենդանի և թռչուն (2002թ.՝ 267):

Այգու աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմել է 92 մարդ, բոլորն էլ՝ հիմնական:

2003թ. կենդանաբանական այգի այցելած հաճախորդների թվաքանակը՝ 2002թ. համեմատ 10.0%-ով ավելացել է և կազմել 110.0 հազ. (2002թ.՝ 100.0 հազ.): Հանրապետության 1000 բնակչի հաշվով այցելությունը կազմել է 34.3:

2003թ. ընթացքում կենդանաբանական այգում կազմակերպվել է 2450 էքսկուրսիա, որի 31.0%-ը՝ դպրոցականների համար: Էքսկուրսիաներին մասնակցել է 70.0 հազ. այցելու, նրանց 64.3%-ը՝ դպրոցականներ (2002թ.՝ 80.0 հազ. այցելու և 65.0%): Կենդանաբանական այգու 7150 այցելուների համար կազմակերպվել է 280 դասախոսություն (2002թ.՝ 6100 այցելու և 320 դասախոսություն):

2003թ. կենդանաբանական այգու ֆինանսական մուտքերը կազմել են 86.8 մլն. դրամ (2002թ. համեմատ դրամք աճել են 0.5%-ով), որից 67.8 մլն. դրամը պետական բյուջեից (2002թ.՝ 70.6 մլն. դրամ), 10.1 մլն. դրամը՝ մուտքի վճարումներց (2002թ.՝ 9.0 մլն. դրամ) և 8.9 մլն. դրամը՝ նվիրատվություններից (2002թ.՝ 6.8 մլն. դրամ): Մուտքի վճարը մեկ այցելուի հաշվով կազմել է միջինը 252 դրամ, 2002թ. 450 դրամի դիմաց:

Ֆինանսական միջոցների օգտագործումը, 2003թ.

	Ընդհանուր, մլն. դրամ	Վճր կամ նվազումը 2002թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %
Նյութական ծախսեր	53.2	9.2
Ոչ նյութական ծառայությունների վճարումներ	3.3	- 29.8
Գործուղման ծախսեր	0.5	- 50.0
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	18.6	5.1
Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ	5.3	0
Կապիտալ ներդրումներ, հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	5.9	- 50.8
Ընդհանուր	86.8	0.6